հայոց աւերակ վանքերից և դերեզմանատներից։ Արձանագրութիւններն սրբած, որմի մէջ հիւսած։ Մաս մի Այիգանայ վանքի քարերից, մաս մը և ս Ղէտրկանայ Ս. Լուսաւորիչ վանքից բերուած են։

Քրդերու դերեզմանատունը չորս է. մին գիւղաքաղաքիս մէջ, որ քիչ կը դործածուի, երկրորդն մզկիթի մօտը, երրորդն Միհրանի թաղը, չորրորդը Ցարաղաճի թաղը։

Բերդիս մի քիլոմէթը յարեւմուտս մի ժայռի մէջ փորուած է մի աղօթատեղի, որ քարայրի ձեւ ունի, որոյ դուռը քաղաքիս արեւմտեան մասին վերայ կը նայի, ի ներքոյ 5—6 քայլ տարածութիւն ունի, արեւելեան կողմն ժայռից սանդխտանման թողուած է, ուր քուրդ ֆախի մի ճրագներ զետեղած է, ու կը վառէ, երբեմն և ցուրտ ձմրան այս տեղ կը քնի, «ճգնաւորի տեղ» անուն ունի քարայրս։

Գրեթէ մերկացեալ վիճակի մէջ գտնուած խեղդար ֆախիին անդ ներկայութիւնից հայոց ուխտագնացութիւնը արգելուած է, կը յաճախին քուրդ կանայք շատ անգամ Նավրուզի օրը։

Այս քարայրին մօտ արջու կերպարանքով ժայռ մի կայ, որոյ համար կասուի թէ արջ եղած է, եկած է ճգնաւորը ուտելու, քար դարձած է։

Այս քարայրէն 7—8 վայրկեան արեւմուտքը ճանապարհի մի եզերքին կայ մի մեծ քարակոյտ «Քաֆիր դոռ» (անհաւատի դերեզման) անուամբ. աստի անցուդարձ անողն պարտաւորեալ է մի քար ձգել այն քարակոյտին վերայ։

Աւանդութիւնը կը պատմէ «ԿոյսԼանում քրիստոնէական հաւատի համար նահատակուած է այս վայ-